ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3-69.20.01 «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 3-69.20.01 «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 3-69.20.01 «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) Հաշվապահ՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում,

2) Գլխավոր հաշվապահ՝ փոքր ու միջին ձեռնարկություններում,

3) Գլխավոր հաշվապահի տեղակալ՝ կապված կազմակերպության ֆինասնատնտեսական գործունեության ծավալներից:

7. Միջին մասնագիտական կրթության 3-69.20.01 «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1) կազմակերպության ֆինանսական գործառնությունների ամբողջական հաշվառումը՝ հաշվապահական հաշվառման ընդհանուր սկզբունքներին համապատասխան, գլխավոր հաշվապահի անմիջական ղեկավարությամբ,

2) սկզբնական հաշվապահական փաստաթղթեր նախապատրաստելը,

3) ֆինանսական հաշվետվություններ կազմելը,

4) դրամական վճարումներին, մուտքերին և ֆինանսական այլ գործառնություններին վերաբերող փաստաթղթերը կազմել

5) կազմված դրամական վճարումներին, մուտքերին և ֆինանսական այլ գործառնություններին վերաբերող փաստաթղթերի ճշգրտության ստուգումը,

6) լրացնել էլեկտրոնային հաշվետվության ձևերը,

7) ձևակերպել հաշվապահական հաշվառման թղթակցություններ, կազմել գրպանցամատյաններ և օգտվել հաշվահապական հաշվառման համակարգչային ծրագրերից

8) իրականացնել ֆինանսական ներքին վերահսկողություն՝ իր լիազորության շրջանակներում,

9) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը: